Արձանագրություն 2

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար

«**ԲԷՑ-ԳՀԾՁԲ-21/53**» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 20.10.2021թ. ժամը 10:00-ին:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Արտուշ Մելքոնյան - Վերահսկման և գույքի կառավարման բաժնի պետ (ԳՊ/ԳԱՊ)

Հանձնաժողովի անդամներ՝

Արամ Ասատրյան - Շահագործման ծառայության պետ (ԳՊ/ԳԱ)

Ավետիս Հովսեփյան - Վերահսկման և գույքի կառավարման բաժնի ճարտարագետ-նախագծող (ԳՊ/ԳԱ)

Տիգրան Ներսիսյան - Ֆինանսական բաժնի գլխավոր մասնագետ (ԳՊ/ԲԱ)

Գրիգոր Խաչոյան - Հաշվապահական հաշվառման բաժնի հաշվապահ (ԳՊ/ԲԱ)

Գնումները համակարգող՝

Դավիթ Գասպարյան - Գնումների և մատակարարման բաժնի գլխավոր մասնագետ

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման նիստի մասին

1. Հայտ ներկայացրած մասնակիցների անվանումները և տվյալները

1.1«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «**ԲԷՑ-ԳՀԾՁԲ-21/53**» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել.

- «ՎՈԼԻՈՍ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ-ն՝ ՀՎՀՀ 00902375, էլ հասցե՝ tender@volios.am
- «Գրանդ ինսփեքշն» ՍՊԸ՝ ՀՎՀՀ 09218126, էլ հասցե՝ grandinspection@mail.ru
- «ՌՈՈՒԴԿՈՆՍՏՐԱԿՏ» ՍՊԸ՝ ՀՎՀՀ 00922303, էլ հասցե՝ roadconstructllc@gmail.com

2. Տվյալներ մասնակիցների հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

2.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջված փաստաթղթերը բացառությամբ «Գրանդ ինսփեքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի, որի փաստաթղթերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված են փոխտնօրենի կողմից, իսկ փաթեթում առկա չէ լիազորագիր, որի համաձայն տվյալ անձը լիազորվում է հաստատել ընկերության փաստաթղթերը, ինչպես նաև էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված չէ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը (Հավելված N 1.2):

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

3. <u>Տվյալներ մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.</u>

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերի բոլոր փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին՝ բացառությամբ.

«ՌՈՈՒԴԿՈՆՍՏՐԱԿՏ» ՍՊԸ-ի, որի կողմից ներկայացված հայտի գնային առաջարկում (Հավելված N 2) ԱԱՀ-ն սխալ է հաշվարկված:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

4. <u>Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.</u>

Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Մասնակցի անվանումը	ՉԱՓԱԲԱԺՆԻ ՀԱՄԱՐԸ՝ 1 «Արևելյան» մասնաճյուղի «Կենտրոն - Մարաշ» 220կՎ օդային գծի թիվ 53-56 հենարանների թռիչքում եզրաչափերի վերականգնում՝ լրացուցիչ հենարանի տեղադրումով, նախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	
	«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մաս:	
	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ՀՀ դրամ
«Գրանդ ինսփեքշն» ՍՊԸ	490000	490000
«ՎՈԼԻՈՍ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ	3760000	4512000

Մասնակցի անվանումը	ՉԱՓԱԲԱԺՆԻ ՀԱՄԱՐԸ՝ 2 «Հարավային» տեղամասի շահագործման բաժնի պահեստների տանիքների նորոգման նախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	
	«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մաս:	
	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ՀՀ դրամ
«ՎՈԼԻՈՍ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ	5640000	6768000
«ՌՈՈՒԴԿՈՆՍՏՐԱԿՏ» ՍՊԸ	26506320	31807580

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պարզաբանումներ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

5. Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

5.1 Ղեկավարելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետով՝ «ՌՈՈՒԴԿՈՆՍՏՐԱԿՏ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

5.2 Ղեկավարելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով՝ գնահատող հանձնաժողովի նիստը կասեցնել.

- Ծանուցել «Գրանդ ինսփեքշն» ՍՊԸ -ին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները և ուղարկել davit.gasparyan@hven.am էլեկտրոնային հասցեին:

5.3 Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավերել սույն թվականի հոկտեմբերի 22-ին ժամը 16:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Արտուշ Մելքոնյան

Հանձնաժողովի անդամներ՝ Արամ Ասատրյան

Ավետիս Հովսեփյան

Տիգրան Ներսիսյան

Գրիգոր Խաչոյան

Գնումները համակարգող՝ Դավիթ Գասպարյան